


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ
 ՎԱՐՉԱԿ ԿԱՐՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹՅՈՒՆ
 ՊԵՏԵ Ե ՈՒՂՂՆԵՒ ԱՌ
 Խմբագր. ԱՐՇԱՒԱՅՍ ԲՐԱԳՐԻ
 ԳԱՅԻՐԷ (Հասպարակի)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
 HABBANIM LE CAIRE (ÉGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան, ողջ դանկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՊԻՏՈՒՄԷ	
Տարեկան Թրաքի	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԽԿ Ե
 ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱՆՔԸ
 Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած
 գրութիւնք եւ չ'են տրուիր:

ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Ինչպէս յայտնի է, Բաղաքիս Վարչութեան Ընդհ. Ժողովը որոշած է, վախճանմամբ և հրատարակմամբ պակաս իր չորս անգամաց տեղ նոր ընտրութիւն կատարելով ամբողջացնել:

Պատկ. Վարչութեան Երեսփ. Ժողովոյ Սնանանագրական սկզբանց շաւղին մէջ առած այս քայլերը՝ պէտք է խոստովանել թէ գնահատելի են և սա՛ Վարչութեան նախաձեռնարկը սեպելու է ծանուցանող, թէ տրամադիր է Ժողովրդեան ինչ ինչ օրինաւոր պահանջմանց գոհացում տալու:

Մէկ բան միայն կը մնայ ինչորոյ առարկայ, ա՛յն է ազգային տուրքը, որուն համար շատեր մեր կարծիքը կը հարցնեն և նայն իսկ կ'ստիպեն այդ նիւթով զբաղել:

Մենք այս մասին այժմէն ոչինչ կրնանք ըսել. այլ մեր թերթին մէջ հրատարակելով Գահիրէի հայ Ժողովրդեան անհատներուն զրկուած նամակին օրինակը, անոր կը միացրնենք Պ. Մ. Մամուրեանի 1863 թուականաւ Երազիկ թերթին ուղղած մէկ նամակը, որ Կ. Պոլսոյ մէջ Սահմանադրութեան հաստատութենէն յետոյ որոշուած ազգային տրոց վրայ պէտք եղածէն շատ աւելի ըսյ կը սփռէ:

Մամուրեան 1861 ին Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն Դիւանապետի պաշտօնով կոչուած է և նա եղած է Սահմանադրութեան յօդուածներուն բացատրողը, մեկնողը, հոգի և մարմին տուողը և ինչ Այս առթիւ ուրեմն անոր նամակին պարունակութիւններն մեծ կարեւորութիւն կրնան ունենալ մեզ համար:

Գահիրէ հոկտ. 25/6 նոյ. 99

Մեծապատիւ Սիրելի,

Տեղւոյս Ազգային Առաջնորդարանը 1897 Սեպտեմբեր 10/22 թուականաւ և 94 համար շրջաբերականաւ, որ ուղղուած է ազգային տուրք տալու կարող մերազնեից, ծանուցած է թէ նոյն թուականէն առկին որոշմամբ վիճակիս պատկառելի Ընդհանուր Ժողովոյ, ազգային տուրք հաստատուած է ՚ի Գահիրէ և ՚ի շրջակայս և թէ անկէ վերջ նոյն տուրքը հիմ պիտի ըլլայ ընտրողական իրաւանց ըստ Ազգային Սահմանադրութեան:

Եւ որովհետեւ Ընդհանուր Ժողովը տարւոյս Հոկտ. 12/24 ի նիստի մէջ որոշած է որ վախճանմամբ և հրատարակմամբ պակաս իր չորս անգամներու տեղ նորեր ընտրութիւն քուէարկութեամբ յառաջիկայ նոյեմ. 14/26ին, 1897 ի ցանկը վերակազմուած է յիշեալ շրջաբերականաւ բացատրուած կերպով, այսինքն տուրք վճարողներու ցանկն անցած են ամեն պատշաճոր և 23 տարին լրացնող Օսմ. հպատակ ազգայիններ, որ բնիկ են, կամ ընտանեօք երեք և աւանց ընտանիքի հինգ տարիէ ՚ի վեր հոս հաստատուած են և տէր են վաստակի և շահու:

Յառաջիկայ քուէարկութեան պիտի մասնակցին ուրեմն անոնք, որ ազգային տուրքի 1897 ի ցանկին մէջ արձանագրուած են և երկու տարեկանը՝ 1897 Մայիս 1 էն ց'30 Ապրիլ 1899, վճարած են, անոնք որ 1898 և 1899ին անցած են տուրք տուողներու ցանկին մէջ և վճարած իրենց պարտքն ց'30 Ապրիլ 1900: Հետեւաբար 2եր սիրելութիւնն նոյն քուէարկութեան մասնակցելու համար՝ պէտք է վճարէ տարեկան այս ինչ չափ գումար:

Յիշեալ նիստի մէջ Ընդհանուր Ժողովը որոշած է նաև որ ազգային տուրքի աստիճանի ընտրութիւնը իւրաքանչիւր վճարողի կամքին ձգուի, այսինքն ան ազատ ըլլայ տարեկան 25, 50, 75 դրչ. ողջ կամ աւելի վճարելու, նուազագոյն աստիճանը վճարողը հաւասար իրաւունք ունենալով բարձրագոյն աստիճանը վճարողին հետ:

Պաշտօնական ընկալագրերն՝ Առաջնորդարանիս Գանձապետին կողմէն ստորագրուելով և Առաջնորդարանի կնքով կրնքուելով, պիտի յանձնուին հաւաքչին, որ դրամը ստացած ժամանակ աստիճանի թիւին բաց մնացած տեղերը լեցնելով թէ ընկալագրին և թէ բունին վրայ, բունը վճարողին ստորագրել պիտի տայ և ընկալագրերը պիտի յանձնէ վճարողին: Կարելի է նաև Առաջնորդարանիս Դիւանատունը դիմել կիրակիէէ զատ ամեն օր, կէս օրէն յետոյ ժամը 2 1/2 էն 4 1/2 և վճարել դրամն յիշեալ եղանակաւ ու ստանալ ընկալագրին:

« Այն ազգայինն՝ որ միկնել նոյ. 6/18 շաբաթ երեկոյ ժամը 3 չ'վարեի իր ազգային տուրքն, ոչոքեալ ևս այս շրջաբերականաւ յայտարարեալ ընդհանրապէս, իրաւունք չ'ունի մասնակցելու նոյն անոյ »

14/26ին կատարուելիք յիշեալ տեսակարեան »

Այս ամենը ծանուցանելով 2եր Սիրելութեան, կը հրաւիրենք զ'2. զ թէ՛ այդ իրաւունքէն չ'զրկուելու և թէ՛ ազգային ծախուոց մասնակցած ըլլալու համար հաճիլ վճարել ՚ի փոխարէն պաշտօնական ընկալագրի ազգային տուրքի 2եր վերոյիշեալ բաժինն:

Երկրորդ շրջաբերականաւ մը տուրք վճարողներուն պիտի հաջորդուի ընտրողաց և ընտրելեաց ցուցակներն հանգերձ հրահանգաւ:

Ըստ որոշման ընտրողական Ժողովոյ ուղղելով զ'այն 2եր Սիրելութեան:

Ողջունելու հայրական սիրոյ
 Առաջնորդ այգան Փոխառեցապահ
 (Կնիք)

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐԸ ԵՒ ՄԱՍՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս 7 յունուար 1865

Աղնիւ Ծաղիկ,

Այսօր ընկած թաղիս Թաղական Խորհրդէն նամակ մը ստացայ որով կ'հրաւիրուիմ քաղաքավարութեամբ՝ որչիւ իմ կարողութեան չափն և սակիք ազգային տրոց գումարս ստորագրելու Դիտեցի որ նամակին մէջ տասր աստիճան կայ, որուն մեծագոյնն է 500 դրուչ և ստորագոյնը 5 դրուչ:

Մէկ կողմէն Սահմանադրութեան 90րդ յօդուածին համեմատ՝ պարտաւոր եմ, ըսի իւրովի, ազգային ընդհանուր ծախուոց տրօք մասնակցելու Այս տուրքը չէ թէ իբր կապուս կամ ոչոքութիւն պիտի տամ, ինչպէս որ Ժամանակ հանդէսն և մինչև անգամ Մայիսն անգիտաբար կը գրեն, այլ իբր պարսէ մտադիւր պիտի վճարեմ այն ընդհանուր ծախուոցի փոխարէն զոր ազգային Վարչութիւնը կ'հաստուցանէ կամ կատարել կ'տայ իմ տեղս զիւսանական գործոց, վարժարանաց բարեկարգութեան, հիւանդանոցի մատակարարութեան համար: Միւս կողմէն մտածելի և տեսայ որ առջեւ կ'եցած տրոց աստիճանաց ցուցակը զիս իմ պարտքս կ'ազատէ և անկարողութեան վիճակի մէջ կ'ենթադրէ անգէտս:

Եւ ի՞նչ պատճառաւ: Վասն զի թէ որ՝ Սահմանադրութեան 90րդ յօդուածին համեմատ՝ բաշխման հիմ պիտի բնութի իւրաքանչիւր անհատի կարողութեան չափն և ասոր վրայ տրոց համեմատութիւնը պիտի հաստատուի, վասն զի թէ որ այսօր մէկ միկնոն զրուչ տարեկան կ'ամուսնուսնեցող հայ մեծատուն մը՝ մեծագոյն աստիճանը 200 դրուչ կ'վճարէ, այն որ քսան և հինգ չ'ազար դրուչ եկամուտ ունի, պիտի վճարէ տասն երկու և կէս զրուչ տուրք, իսկ ես որ խիստ փոքր

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ Պ. ԵՐՈՒԱՆԴ ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ

Առշաղյուսի 29րդ թուոյն մէջ երեւոյած Ձեր յօդուածին ի պատասխան, ներկայիս կը յայտարարեմ թէ ես՝ նախանձախնդիր անուանա անաղարտ մնալուն. կը հրաւիրեմ զՁեզ մինչեւ 3 օր կամ հրապարակաւ ետ առնել Ձեր իմ մասին գործածած նախապական խօսքերը և կամ ընդունիլ լինիլ-րական ատեանի մը կազմութիւնը որ պիտի բաղկանայ երկուսէք ընտրուած չեզոք անձնաւորութիւններէ. հակառակ պարագային ընդունած և հաստատած պիտի ըլլաք այն անտեղի և նոյն իսկ Ձեզ համար անպատուաբեր նախատինքները որոնցմով ողորուած էր Ձեր յօդուածը:

Իբրև պատասխան սոյն բաց նամակին, կը հրաւիրեմ զՁեզ ընդունիլ վերոյիշեալ պայմաններէն մի'ն. յայտարարելով միանգամայն թէ Ո ԵՒ՝ է ԳՐԱՒՈՐ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է:

ԱՊԱՀ

13 Նոյեմբեր 1899

Աստ

Աթէնքի Միութիւն ամսաթերթը, որոյ մասին քաղաքիս մէջ տարածայնութիւններ կը շրջէր թէ դադրած է, վերջերս ստանալով նոյն թերթին Սեպտեմբ. և Հոկտ. թիւերն, ուրախութեամբ կրնանք ծանուցանել թէ անոր մասին եղած զրոյցներն բոլորովին անհիմն են և միմիայն գրաշարին առանց լուր տարու առնել քաղքն եղած է պատճառ, թերթի հրատարակութեան մէկ ամիս յապաղմանը:

Միտքիս թերթի հասցէն է.

M. ARCHAME

(Poste restante) ATHÈNES (Grèce)

ՀԵՌԱԳԻՐ

ՀԱՎԱՍԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ՏԸՐՊԱՆ, 12 Նոյ. — Նաւային զօրաց շոկատ մը ցամաք ելած է 20 թնթանօթով քաղաքը պաշտպանողական վիճակի մէջ գնելու համար:

ՔԱԲ, 12 Նոյ. — 5000 զօրաց բանակ մը հասած է:

ԻՍԹԻՔՕՏԹ, 12 Նոյ. — Նոյեմբեր 9ին բուռն թնթանօթաձգութիւն մը լուսած է Լէյտիամիթի շուրջը:

ՊԱՐՍԷԼՈ, 12 Նոյ. — Կացութիւնը խիստ ծանր է. ամբողջ քաղաքայեանին տանը տարակիները ջարդախամ է իր հրաժարականը պահանջելով:

ՏՊԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Երբ հասայ Աղէքսանդրիա՝ նշմարեցի որ նորէն սկիւած է ոգևորութիւնը տիրել. չնորհիւ օտարազգի բուռխսներու, և քարանթիւայի մատուցող բարձման յոյսը ժպիտ մը զետեղած է տեղացի վաճառականաց և խանութպաններու զէմքին վրայ:

Ինչպէս որ Աղէքսանդրիա մեծ տարբերութիւն ունի Գահիրէէն, իւր գեղեցիկ պոռտաներով, հակայ և հաստատուն չէնքերով, նոյնպէս ալ ազգային տեսակէտով անպարտաւորութիւն մը կայ:

Թէպէտև 3 — 4 ժամուայ հեռաւորութիւն մը թէպէտև միեւնոյն կառավարութեան քաղաքներն, բայց մին՝ Աղէքսանդրիան, կը պատկերացնէ Թրիքսի իր փողոցներով, չէնքերով և վաճառականութեամբ, իսկ Գահիրէն՝ Աթէնքի նման:

Ինչպէս ամեն հայ կը փափաքի այցելած քաղաքին եկեղեցին, վարժարանը և երիտասարդութեան համախմբման վայրերը տեսնել, առաջին անգամ նոյն փափաքով տողորուած այցելեցի Աղէքսանդրիոյ եկեղեցին, ուր իսլամ ոստիկանին սուխը և ձեռնակապը սրբապղծած չէ, հոն սրտի հանդարտութեամբ աղօթեցի և թիթեւոգի դուրս ելայ եկեղեցիէն. զգացի որ բոլոր մեղքերս քաւուած էին . . .

Ինչ քաղցր տպաւորութեան տակ կը մնայ եղեր մարդ՝ երբ օտար ձեռքեր չեն գար խոռվելու կրօնական զգացումներն. վայրիկ մը յիշեցի Ս. Վարդանանց պատերազմը և ըսի. սրբաբեր այդ հայ իշխաններ միշտ իրաւունք ունին մեր երախտապիտութեան, քանի որ իրենց արեամբ պաշտպանեցին մեր Ս. Եկեղեցին պիղծ Պարսկի ոտընձգութիւններէն. թո՛ղ արթնան պահ մը այդ Սուրբ Քաջերն, հայաստանեայց եկեղեցւոյ Ախոյեաններն, տեսնելու համար թէ՛ այժմեան հայ իշխաններն, փոխանակ կուրծք մալու թշնամոյն և պաշտպանելու իրենց առաքելաւանդ եկեղեցին՝ ինչե՞ր կընեն:

Շատ ճշմարիտ դիտողութիւն մը ըրաւ հոն գտնուող բարեկամներէս մին « թէ զուր արդարեւ Սուլթան Մահմուտի օրերը տեղի ունեցած սո ինաւոր պատարագ կը տեսնէք » ըսէ՛ նաև նօպութաւոր և Բեյքեհտոր աւելցուցի:

Եկեղեցիէն դուրս ելլելէ յետոյ քայլերս ուղղեցի զէպի վարժարան. ինչպէս շատերու ծանօթ է, Տաճարի դրան ճիշդ զէմը կը գտնուի վարժարանի դուռը. երկու սրբազան յարկեր իրարու հանդէպ կանգնած, զիրար պաշտպանելին կը յայտարարեն. և արդէն մեր նախահարք իրաւամբ զայն անբաժանելի կապած են եկեղեցիէն. որովհետև վարժարանն է որ պիտի ուսուցանէ եկեղեցւոյ զաւակաց պաշտպանել զինքն՝ նոյն իսկ իրենց արեան գնով. իսկ եկեղեցին, իր սրբազան հովանոյն տակ պիտի պահպանէ այդ նուիրական հաստատութիւնն — լուսոյ և գիտութեան վառարանը. — ընդ նմին և իր հաւատացեալներն:

Երբ վարժարանի դռնէն ներս մտայ տիրոզ մաքրութիւնը և կարգապահութիւնը հիացուց զիս. այդ պահուն Պօլսոյ վարժարաններէն միոյն մէջ կարծեցի Վասն զի ո՛վ կրնայ յուսալ թէ Եգիպտոսի ոստանին Գահիրէի մէջ, Պօլսոյ Վէզիր Խանէն տարբերութիւն չունեցող վարժարան մը ըլլայ. իսկ Աղէքսանդրիոյ մէջ օրինակելի վարժարան մը. չէ՞մի որ երկուքն ալ նոյն միջնորդութիւն, նոյն կլիմայի, սփինքաներու, արմաւենիւր երկրին մէջ են. ինչո՞ւ մին քէլլահական անամալին. իսկ միւսը հայկական յառաջը:

Գալով վարժարանի ներքին մասին՝ ճիշդ յար և նման էարտային վայրին. իրաւամբ լուսոյ վառարան. և արդէն կեանքի մէջ արտաքինը ներքինին հայելին չէ՞ (ի բաց ատեալ շարքեալ կիներն և զարդարուած երիտասարդներն):

Տեսնուելով Տնօրէնի և երբեմնի Հայ ուսուցչիս հետ, որ այժմ կը պաշտօնավարէ սոյն վարժարանի մէջ, տեսնելով դասարաններու, գրասեղաններու և աշակերտաց օշինակելի մաքրութիւնն ու կարգապահութիւնը և ընդ նմին բառին բուն իմաստով հոգածութիւնը, մեկնեցայ խիստ գոհ տպաւորութեան ներքեւ. յուսալով որ Աղէքսանդրիոյ վարժարանը պիտի կրնայ թուր մ'ըլլալ այն վիճին զէմ, որուն մէջ անհետիլ վիճակուած է Գահիրէի հայութեանը, ցորչափ անամալին կայ:

Ժող. Գրադարան-ընթերցատուն անունով վայր մը կայ, այցելողը խիստ գոհ պիտի մնայ տեսնելով արտաքինը, քանի մը հայ երիտասարդներ հաւաքուած և վարձած են տեղ մը, ուր կը գտնուի արտասահմանեան ամեն թերթեր ինչպէս նաև գրադարան մը. նպատակը ժամանցներ կրնայ ունենալ մարդ՝ երբ ուզէ օգտուիլ անկէ. բայց ցաւալի կէտ մը կայ որ այդ Գրադարանը ընթերցատունը պատճառ դարձած է կուսակցական կրքերն գոգելու և հանրածանօթ բանակութեան սկիւր: Մինչդեռ ամբողջ հայութիւնը անպատուելի գոհուակութիւն մը ունեցաւ՝ ի տես համբարաչի գործակցութեան, թէ՛ Լահլի վեհաժողովին դիմում ընելու առթիւ գումարուած զանազան միջիններուն և թէ՛ Օրմահանի անուան չը յիշուի ինչորոյն մէջ: Մինչդեռ Գահիրէի մէջ զժամադարար 1—2 ինքնահաւան համալսարաններ իրբեւ օձ սողոսկելով ժողովրդի մէջ, պատճառ դարձան ժողովրդեան իրաւանց կորստեանը:

Աւա՛ղ, որ այդ համբարաչի գործակցութիւնը խարուսիկ երազ մը նկատելու հարկին տակ կը գտնուինք, վասն զի հակառակ զանազան անկողմնակալ անձանց միջամտութեան և խնդրանաց, անկարելի դարձած է միութեամբ գործակցելը:

Կարծես թէ միեւնոյն նպատակին ծառայողներ չեն, այլ զիրար բղքտելու համար գոյութիւն առած. ինչ որ մտածել կուտայ թէ՛ մի՛ գոյց գործի ապագային մէջ երկու հայ բանակներ իրարու բաղխին, « և քակսի եղբայրասպան պատերազմը այս մասին ուրիշ առթիւ կը փափաքեմ գրել:

Ինչպէս որ Գահիրէէն մեկնած ատենս Քրիստոսի պատուէրն ի գործ դրի կօշիկներուս փոշին թօթափելով, նոյնը պարտիմ ընել Աղէքսանդրիայէ մեկնած պահուս. որուն պատճառն է կուսակցական կամ աւելի ճիշդը եղբայրասպան կոխը:

Բայց այդ ընելէ առաջ կուզեմ քանի մը առաջարկ ներկայացնել ազգագուս Արեւալոյս ի Գահիրէի վարժարանի մասին, որուն վիճակը արգահատելի է, արդեօք օգտակար չ'ըլլար Գահիրէի վարժարանի մասին հետեւեալ կետերու վրայ ընդհանուր վիճաբանութիւն մը բացուելը:

1. Գասարանակա՞ն դրութիւն, թէ սրահական:
 2. Պատասխանատու. Տնօրէնի որ իշխանութեան տակ (1) թէ հոգաբարձութեան:
 3. Պօլսոյ թաղային վարժարաններու՞ ծրագրով, թէ Կեղրոնականի կամ Պէքպլեանի:
- Վերոյգրեալ երեք հարցերն վիճաբանութեան ենթարկելով, կարելի է ջանալ Ազգ. Վարժարանը պահանջուած վիճակին հասցնելու. Երբ ապագայ սերունդը այժմէն կը փճայնենք, հակասած չ'ընք լինիր. քանի որ ոյի ի բոլին կ'աշխատենք հայաստանը վերականգնելու:

Հայ աղջիկներ երբ կերթան օտար վարժարաններ, Լատինական կամ Բողոքական կրթութիւն առնել, ինչպէս կարելի է յուսալ որ օր մը այդ օրիորդք երբ մայր լինին, ճշմարիտ հայեր պիտի հասցնեն Ազգիկ Պիտի ջանամ գրել Ձեզ և համեմատութեան գնել Եգիպտոսի հայութիւնը իմ հետդնտէ այցելած քաղաքներու հայութեան հետ:

Աղէքսանդրիա 6/11/99 ԱՆՑՈՐԴ

(1) Անշուշտ կը հասկցուի մասնագէտ մանկավարժ մը և ոչ զատաւոր կամ կապալառու մը: Ծ. 8

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱՎԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐԻՍՏՈՍ 12 ՆՈՅԵՄԲԵՐ 1899

Ա. Թիւ	1573	չահած է	Ֆրանք	1000
Բ. "	7418	"	"	200
Գ. "	2630	"	"	100
Դ. "	2204	"	"	50
Ե. "	8034	"	"	50

Հետեւեալը 25 ական ֆրանք կը շահին

3528	6344	7105	7044	2599	8817
5178	691	7812	9855	9247	1747
1079	8463	4308	3678	9799	1014
	4734	4538	8283		328

ԾԱՆՈԹ. — Այն շահող թիւերը որոց վերահեալ պարգևներն ուժը օրէն չեն գանձուիր, Բնկերութեան անուակին սեփականութիւնը կը լինին:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԵՐ

ՉԱՓԱՅԱՍՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՀԱՅ ԱԻԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ Ի ՏԱՂՈՒՏԻՅԷ

Առաջիկայ նոյեմբեր ամսոյ 6էն սկսեալ երեկոյները ժամը 7էն մինչև 9 1/2 պիտի աւանդուին Անգղ. Գաղղ. Արարերէն և Հայերէն դասեր:

Դիմել առ Մ. Յ. ԳնԱճԵԱՆ Հիմնադիր-Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՈ

Յուզի Պափ վանաւասան մօտերը, Կամե-էլ-Պենաթի ճիւղ գիմարը

ԵԿԱՒՅՅ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փուռին մէջ, անխարդախ աւելի կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի և կաթի պարսիմաթներ, եւայլն:

Եկաւօֆ և Ընկերութիւն մեծ ջանք և հոգածութեամբ պիտի ունենան իրենց դիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:

Յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին: 15-50

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայեալ տեղական կառավարութիւնէն և բժշկական վարժարանէն

Իւր անուակութիւնը հաստատած է ի Շարա Ապտիւլ-Աղիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը և տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարևոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի ձևան: 18-24

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿՐԱԾ

ԳԱՀԻՐԷ, — Կրօնի փողոց, — ԳԱՀԻՐԷ: Ս. Ե. Ս. Սեմալիի վանաւասան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և քօնսօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԻՔ ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանազարդ, ոսկի, արծաթ և ցիֆի:

Յրահասկան եւ ամերիկեան ապրանք ամենաընտիր տեսակներէն զարդեղներ, շորաներ, օղեր, մասանիներ եւայլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

31-50

ՏՕՔՓԻՐ ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԺ

Ապիսի, Շարի Գուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղաներ:

Կը գաղղիցնէ վայրկեանապէս սկոպի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած աղաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ: 3 40-40

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ

Տայիբի Սանիթի ճիւղ գիմար

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց և տղայոց համար:

Գիները չափաւոր և աման ֆորձ մը միայն կը բուժէ: 22-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹՎԱԿԱՆԱՏՈՒՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ ապաղրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցիֆարսեր, Ցանկեր, Գիրքեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմար, Բնկերութեանց եւ վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու վերաբերեալ, ճշգրտապահութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եգիպտոսի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով կը կատարուին:

Տպարանի քիւ Ս. Ա. ԴԱՐԻՆԵԱՆ

Le Gérant Dr A. S. HAGOPIAN

ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

Կ. ՊՕԼՍՈՅ

ՀԱՅ ԳԻՒՐԲՅՈՒՆ ԱՐՇԱԼՈՅԻՆ ԵՒ ԱՌԱՋՆԱԿԱՐԳԸ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ

ԳԻՆ.Պ.Է.Է.ԵՒՍԷՒՆԷ

Ամեն տեսակ հին և նոր մուշտակները եւրոպական և թուրքական ճաշակով ձեւի կը բերէ և նորի կը վերածէ:

Իրեն դիմող յարգելի յաճախորդները պատրաստ պիտի գտնեն նաև մուշտակ օձիքներ և լին:

Անոնք որ իրենց հինցած մուշտակները տանը մէկ անկիւնը նետելով ցեցերու կեր կ'ընեն, կրնան այս առիթէն օգտուիլ:

1-8

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԻԷ, ՎԷՔԱԼԷՅ-ԷԼ-ԱՍՍՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բասարգ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:

Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող: Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը գաղղիցնէ եւ մաշերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած և հիւանալի արդիւնք տեսնուած է. Շիշը 8 դրոշով (2 ֆրանք):

Ճերմկցնող շուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եգիպտոսի մէջ միակը:

Ակուայի փոշի և շուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակագրողները: 4 3-8